

6258

Ի Ն Զ Ա Ս Ա Ց  
Կ Ո Ւ Ս Ա Վ =  
Յ Ո Ւ Թ Յ Ա Ն

XVII

ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՆ

ՀԱՌԱ  
L - 97

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴԻՐԴՆ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ  
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ. ՄՈՍԿՎԱ. 1929

Արմ.

2-2466a

25 AUG 2005

2-2466<sub>2</sub> թ. ՀՈՒՑԵՆԿՈ


174 NOV 2009

ՅԿՊ:Յ

L-97

ԻՆՉ ԱՍԱՑ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ

# XVI ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՆ



ԽՎ. № 20476

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՌԻՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԸԿ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՄՈՍԿՎԱ

1929

6258

03 MAY 2019



39808-60

Главлит А-13560

Заказ № 857

Тираж 4000 экз.

## I. ՆՈՐ ԵՏԱՐԻ ՇԵՄՔԻՆ

Համամիութենական Կոմունիստական Կուսակցության(բ) XVI կոնֆերենցիան իր վորոշումները կայացնելիս հաշվի յետուել միջազգային հեղափոխության շարժման բեկման շըրջանի, ինչպես նաև սոցիալիստական վերակառուցման շրջանի առանձնահատկությունները։ Համարյա այս բոլոր խնդիրների մասին իր ժամանակին նիշել եր Կոմկուսի XV համագումարը։

Միջազգային ասպարիզում այդ բեկումը բնորոշվում եա) կապիտալիզմի բանակում ներքին հակասությունների սրումով հակասություններ, վորոնք ավելի յեն խախում նրա ժամանակավոր անկայուն ստարիլիզացիան և ուժեղացնում պատերազմի և իմպերիալիստական պետությունների՝ ԽՍՀ Միության վրա հարձակման վտանգը. բ) պրոլետարիատի՝ բուրժուազիայի դեմ մղած պայքարի աճումով և նոր հեղափոխական թափի ուժեղացումով։

Յերկրի ներսում մենք նպատակ ենք դրել — ա) ԽՍՀ Միության տնտեսության հիմնովին վերակառուցումն նոր տեխնիքական հիմունքներով՝ առաջավոր կապիտալիստական յերկրներին շուտափույթ հասնելու և նրանից ել առաջ անցնելու համար. բ) կապիտալիզմի արմատների վոչնչացումն՝ ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման միջոցով. գ) դասակարգային պայքարի սրումը, վոր կապված ե սոցիալիստական արշավի ընդայնման և կապիտալիստական տարրերի ընդդիմագրության աճման հետ։

Այս բոլոր խնդիրների լուծումը և նրանց հետ կապված անխուսափելի դժվարությունների հաղթահարումը սոցիալիստական շինարարության ներկա բեկման շրջանում պահանջում է վերակառուցել շարքերը և պրոլետարական դիկտատուրայի բոլոր որգանների աշխատանքի մեթոդները։ Նույն չափով անհրաժեշտ է բանվոր դասակարգի բոլոր կազմակերպությունների աշխատանքը վերակառուցել՝ պրոլետարական և կիսապրոլետարական մասսաների ակտիվականության ամենալայն մոբիլիզացիայի գծով, գյուղացիության նկատմամբ ուժեղացնելով պրոլետարական դեկավարությունը, համախմբելով և զարգացնելով չքավոր և միջակ՝ գյուղացիությունը՝ կուլակների գեմ վճռական պայքար տանելու գործում։<sup>1</sup>

Այս պայմաններում ԽVI կոնֆերենցիան շեշտեց ներկուսակցական քաղաքականության գլխավոր խնդիրը — դա աջ թեքման և գեպի այդ ցուցյ տրվող հաշտվողական վերաբերմունքի լիակատար հաղթահարումն է։  
Վերսիցաւ խնդիրների լուծումով զբաղվեց Համկե (բ) XVI կոնֆերենցիան, վոր քննեց հետեւյալ հարցերը.

1. Ժողովրդական տնտեսության զարգացման հիմքամյապանը;
2. Գյուղական տնտեսության վերելքի ուղիները և միջակ գյուղացու վրա դրված հարկը թեթևացնելու հարցը;
3. Բյուրոկրատիզմի գեմ մղվող պայքարի արդյունքները և մոտակա անելիքները;
4. Համկե (բ) անդամների և թեկնածուների գտման և ստուգման հարցը։

1 Նոր լույս տեսան հետեւյալ գրբոյկները — 1) «Աջ թեքումը կուսակցության շարքերում», — Բիստրյանսկու և Միլուտինի, 2) «Պայքար աջ թեքման և հաշտվողականության դեմ»; Հրատ. ԽՍՀՄ ժող. Կենտր. Հրատարակչության։

## II. ՀԱՅՆԵԼ ԱՌԱՋԱՎՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻՆ ՅԵՎ ՆՐԱՆՑԻՑ ԵԼ ԱՌԱՋ ԱՆՑՆԵԼ

Ագրարային-ինդուստրիալան մեր յերկիրը պետք է դարձնենի ինդուստրիալան-ագրարային

Գիտական սոցիալիզմի հիմնադիրը՝ կ. Մարքսը պրոլետարիատի անելիքները վորոշելիս այս ձևով և արտահայտվել. — Մինչև այժմ բոլոր գիտնականները ուսումնասիրում եյին աշխարհը՝ նրան հասկանալու համար։ Պրոլետարիատը պետք է ուսումնասիրի աշխարհը՝ նրան փոխելու համար։ Այսպիսի ըմբռնողությամբ և թափանցված բոյլեկիների, մարքսիզմի-լենինիզմի ամբողջ ուսմունքը, իր ամեն մի քայլին պրոլետարիատը մոտենում է այս հեղափոխական տեսակետից։ Ամեն բանում պրոլետարիատը դեկավարվում է այս խնդրով՝ փոփոխել բուրժուազիայի կապիտալիստական կարգերն իր՝ սոցիալիստական կարգերով։ Բոլոր հինը, կապիտալիստականը պրոլետարիատը վոչնչացնում է և վերաշնուրմ, վերակառուցում, վերափոխում ըստ իր՝ նոր սոցիալիստական հասարակակարգի կառուցման նպատակների։

Ավելի քան յերեկիցե, կ. Մարքսի այս արտահայտությունը հաստատվում է մեր որերում։

Համկե (բ) տասնըվեցերորդ կոնֆերենցիայի ամբողջ աշխատանքն ընթացավ այդ նշանի տակ։ Կոնֆերենցիան ընդունեց սոցիալիստական շինարարության հիմքամյա

պլանը, հատուկ քննության յենթարկվեցին և նախագծվեցին գյուղատնտեսության զարգացման ռազիները:

Նախագծված աշխատանքների իրագործմամբ մեր Միության պրոլետարիատը վերակերտում է մեր յերկիրը նոր՝ մինչ այժմ չտեսնված հիմունքներով: «Ժողովրդական տնտեսության հինգամյա պլանի» իրագործումը, վոր ընդունված է XXI կոնֆերենցիայում, բացարձակորեն կփոխի մեր յերկիրը բնույթը: Ազգարային-ինդուստրիական մեր յերկիրը մենք կդարձնենք ինդուստրիական-ազգային: Սա նշանակում է վոր մենք այս հինգ տարում այնպես պետք և վերաշինենք մեր յերկիրը, վոր նա յետամասց, մտնր-գյուղացիական, գյուղական տնտեսության գերակող յերկրից դառնա առաջալիոր յերկիր՝ լայնորեն զարգացած արտադրությամբ, ըստ վորում արդյունաբերությունը պետք և լինի գյուղատնտեսությունից գերակոռոր: Այս հինգ տարում մենք արմատախիլ պետք և անենք կապիտալիզմի բոլոր մնացորդները, վորոնք արմատացել են մանր-սեփականատիրական գյուղացիական տնտեսության մեջ:

Այս մեծ խնդիրները հաջողությամբ լուծելու նպատակով կոնֆերենցիան նախագծեց նաև մեր ապարատի բյուրոկրատիզմի դեմ կովելու միջոցները, նրա դուռման, այլ և կուսակցության դաման միջոցները:

Առանց մաքրելու կուսակցության և խորհրդային ապարատի մեջ սողոսկած դասակարգային խորթ տարրերին, առանց՝ կուսակցության և խորհրդային ապարատը լրացնելու և ամրացնելու պրոլետարական և պրոլետարիատին նվիրված աշխատավոր մասսաներով, առանց վճռական պայքար մղելու բյուրոկրատիզմի դեմ, — անհնարին և լուծել մեր առաջ դրված խնդիրը, — մեր յերկիրը սոցիալիստական ձևով վերակառուցելու խնդիրը:

Պրոլետարիատի դիկտատորայի յերեք օրշաները՝ պրոլետարիատի բոնած յերեք բննույթունն ե

Պրոլետարիատի դիկտատորայի առաջին տարիները բանվորների և գյուղացիների ամբողջ ուժերն ուղղված եյին ցարական գեներալների, նախկին կապիտալիստների, կալվածատերերի և ոտարյերկրյա բուրժուազիայի բազմաթիվ բանակների դեմ զինված պայքար մղելու կողմը: Այս կովի մեջ պրոլետարիատը կարողացավ պաշտպանել իր հարազատ Խորհրդային իշխանությունը:

Իր առաջին քննությունը՝ քաղաքական անկախությունից՝ պրոլետարիատը տվեց իր արյունով:

Վրա հասավ յերկրորդ հարցը՝ առանց կալվածատերերի ու գործարանատերերի ցուցմունքների, իր ձեռքով շտապ կերպով վերականգնել ավերված տնտեսությունը: «Մազմական կոմունիզմից «ն եպ»-ին անցնելը շատ ծանր էր: Սակայն այս անցումը պրոլետարիատի հանձնարեղ առաջնորդ՝ ուսուցիչ ընկ. Լենինի ղեկավարությամբ կատարվեց: Բանվորներն ու գյուղացիները առանց «տերերի» սկսեցին վերականգնել իրենց տնտեսությունը: Նորից ծխացին գործարանների ծխներույղները արտերը կանաչին տվին: Կոմունիստական կուսակցության (բոյլերիկների) և խորհրդային իշխանության ղեկավարությամբ աշխատավորությունը վերականգնեց իր առանցքությունը: Սներևակայելի ջանքերով և մեծամեծ զոհերով, բայց և այնպես ն ե պ-ի առաջին վիրականգման շրջանն իր հիմնականում ավարտված ե: Այս յերկրորդ քննությունն ևս պրոլետարիատը պատվով բռնեց:

Այժմ հասել ե յերրորդ՝ վճռական քննությունը: Հասել ե «ն եպ»-ի նոր շրջանը՝ սոցիալիզմի անմիջական կառուցման շրջանը:

Պրոլետարիատն ապացուցեց, վոր նա կարող է հրաժանը գործածել յարական գեներալներից վոչ պակաս: Առանց ֆաքտիկանտների և կալվածատերերի բանվորները գործի դրին գործարաններն ու ֆաքտիկները, գյուղացիք ցանեցին արտեր: Առանց ֆաքտիկանտների և գործարանատերերի պրոլետարիատը կկառուցի նոր՝ ավելի կատարյալ գործարաններ և ֆաքտիկներ, կզարդացնի ու առաջ կտանի մինչև այժմ չտեսնված արդյունաբերություն: Առանց կալվածատերերի, գյուղացիները՝ միջակներն ու չքավորները՝ բանվորների ոգնությամբ կբարձրացնեն իրենց դաշտերի մինչև այժմ չտեսնված չափերով բերքերը, կուլակների և կալվածատերերի տնտեսությունից ել առաջ կանցնեն: Այս նոր շրջանն ե բացում «Ժողովրդական տնտեսության զարգացման հիմքամյա պլանը», վորն ընդունված և XVII կուսկոնքերենցիայում: Սա լինելու յե ամբողջ ժողովրդական տնտեսության վերակառուցման, վճռական վերափոխման ըլջանը: Նոր հիմունքներով կվերաշինվեն և կկառուցվեն նոր գործարաններ ու ֆաքտիկներ, նոր ձեերով հերկվելու յեն դաշտերը: Նոր տեխնիկան, սոցիալիստական տրակտորները կվերափոխեն վոչ միայն մեր արդյունաբերությունը, վոչ միայն նոր ձեռվ կվարեն արտերը, այլև կուլտուրապես կվերափոխեն մեզ ևս, նոր կուլտուրական շերտեր կբարձրացնեն, կտան նոր սոցիալիստական ծիլեր:

Հասնել կապիտալիստական յերկրներին յել նրանցից ել առաջ անցնել

Ըստ. Լենինը գլուխ եր, վոր մեր առաջ կանգնած և այս խնդիրը՝ «կամ վոչնչանալ, կամ հասնել առաջավոր յերկրներին և նրանցից տնտեսապես առաջ անց-

ել: Յեթե մենք տնտեսապես չհասնենք կապիտալիստներին և նրանցից առաջ չանցնենք տեխնիկայի ասպարիզում, յեթե չկարողանանք բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը ավելի շատ քան թե կապիտալիստների մոտ և չկարողանանք մեր գաշտերից բերքը ստանալ ավելի, քան արտասահմանի կալվածատերերն ու կուլակներն են վերցնում իրենց հողերից, յեթե մենք չկարողանանք արտադրել ավելի լավ և ավելի եժան գնով ապրանքներ, քան արտադրվում են կապիտալիստական ցերկըներում, — մենք կկորչենք: «Կորչել, կամ ամբողջ արագությամբ առաջ նետվել»: Այսպես և պատմությունը դրել հարցը», — զբում եր ընկ. Լենինը: «Կուսակցության լողունդն ե — ինչպես շեշտել և չամկե (թ) XVI կոնֆերենցիան — «հասնել և առաջ անցնել տեխնիկական-տնտեսական տեսակետից՝ առաջադեմ կապիտալիստական յերկրներից»:

Արտաքին վտանգը — միջազգային իմպերիալիզմը

Վժր վտանգները կարող են մեզ վոչնչացնել: Ի՞նչպիսի վտանգներ են մեզ սպառնում: Մեր առաջ կա յերկու վտանգ — արտաքին և ներքին:

Մեզ վրա կարող ե հարձակվել իմպերիալիզմը՝ միջազգային բուրժուազիան և խեղդել մեզ: Այս վտանգը մենք կարող ենք հաղթահարել միմիայն միջազգային պրոլետարիատի ոգնությամբ: Մենք մենակ, առանց միջազգային պրոլետարիատի կամ միջազգային հեղափոխության այս կամ այն ոգնության չենք կարող հաղթահարել: Սրանից գեռ չի հետևում, վոր միջազգային հականեղափոխությունից մեր

<sup>1</sup> Հասոր. XIV. մաս 2-րդ, եջ 213. «Սպառնացող կատաստրոֆան և ինչպես կովել նրա դեմ»:

պաշտպանությունը կախված է միայն միջազգային հեղափոխությունից։ Շատ բան կախված կլինի ամենից առաջ մեղանից՝ մեր Կարմիր բանակի ուժեղությունից, մեր ժողովրդական տնտեսության ամրությունից, նրա ինդուստրիալիզացիայից, ժողովրդական տնտեսության սոցիալիստական հատվածի ամրությունից և զարգացումից։ Այս բոլորն իր հերթին անհնարին և առանց պրոլետարիատի և աշխատավոր գյուղացիության միջև կնքած միության հետագա ամրապնդման՝ պրոլետարիատի և նրա կոմունիստական կուսակցության զարգացման և ամրապնդման հիմունքով։

Ներքին վտանգը — կապիտալիզմ ծնող մանր արտադրությունը

Մեզ վոչ պակաս վտանգ և սպառնում նաև ներսից։ Հասկանալի յե, վոր ներքին վտանգը արտաքին վտանգ ել եւ Յեզ ընդհակառակը Ռւստի պետք և հիշել վոր նման անջրպետումը զուտ պայմանական եւ Այս յերկու վտանգը փոխադարձար իրար են հյուսվում և իրենցից եապես մի վտանգ են ներկայացնում, այն եւ Խորհրդային իշխանության վոչնչացումը և վերադարձ հին ժամանակների — կալվածատերերի և կապիտալիստների իշխանությանը։

Ինչում ե այս ներքին վտանգի արմատը՝ հիմքը։

Ընկ. Լենինն այդ հարցին այսպիսի պատասխան է տալիս. «Քանի դեռ մենք ապրում ենք մանր-գյուղացիական յերկում, կապիտալիզմի համար Ռուսաստանում ավելի ամուր տնտեսական հիմք (բազ) կա, քան կոմունիզմի»<sup>1</sup>; «...Մենք կապիտալիզմի արմատները չենք պոկել և ներքին թշնամու հիմքը, Փունդամենտը չենք խախտել»<sup>2</sup>; Ընկ. Լենինը շեշտում ե, վոր «դա անհրաժեշտ է հիշել»<sup>3</sup>; Հետեւա

պես, քանի վոր մեր յերկիրը դեռևս կմնա մանր-գյուղացիական յերկիր, մինչ այդ ժամանակ կապիտալիզմը մեզ մոտ կոմունիզմից ուժեղ կլինի։ Կապիտալիզմի արժատների ուժը գտնվում է մանը արտադրության ուժի մեջ, վորը «միշտ, ամեն որ, ամեն ժամ, տարերայնորեն և մասսայական մասշտաբով ծնում է կապիտալիզմ և բուրժուազիա»։

Կարելի յէ արդյոք ազավել ներքին վտանգից

Մենք տապալեցինք կապիտալիզմը դեռ 1917 թվին, կապիտալիստներին և կալվածատերերին քշեցինք արտասահման, սակայն մանը արտադրությունը մենք դեռ չենք վոչնչացրել, Առայժմ մենք դեռ ապրում ենք մանր-գյուղացիական յերկում։ Մանը արտադրությունը վերստին ծնում է կապիտալիզմ և բուրժուազիա։ Առաջացնում ե այն շարունակ և մասսայականորեն։ Մենք կարող ենք վերադարձալ և կանգնել հին կոտրած տաշտակի առաջ։ Մեզ սպառնում է վերասերման վտանգը, Պրոլետարիատի դիկտատուրայի յերկրից, սոցիալիզմի փոխարեն մենք կարող ենք նորից յետ գնալ գետի կապիտալիզմը։

Կարելի՞ յէ այդ վիճակից յելք գտնել։

Տրոցկիստները Տրոցկու<sup>1</sup> հետ միասին պնդում եյին — մի բան վոր միջազգային հեղափոխություն չկա, կնշանակե յելք ել չի կարող լինել։ Իր «1905 թ.»<sup>2</sup> կոչված գրքի մեջ Տրոցկին գրում ե, թե «իր հաղթությունը ապահովելու համար... իր իշխանության առաջին իսկ շրջանում» բուրժուազիայի դեմ մղված պայքարում պրոլետարիատը «կ հասնի

<sup>1</sup> Նա այժմ վաճառվել է բուրժուազիային և իր հականեղափոխական աշխատանքի պատճառով աքսորված և արտասահման։

<sup>2</sup> Եջ 4, Առաջաբան։

<sup>1</sup> Հասոր XVII, էջ 427 — 428։

թշնամական բաղիմանն . . . գյուղացիության լայն մասսաների հետ»:

Ընկ. Լենինը ուրիշ յելք եր տեսնում. և նա մատնանշեց հնարավոր անկումն հաղթահարելու ուղիներն ու միջոցներն, մինչդեռ Տրոցկին այդ յելքը չեր գտնում: Յեթե Տրոցկին նախատեսնում եր պրոլետարիատի «թշնամական ընդհարումն գյուղացիական լայն մասսաների հետ», ապա ընկ. Լենինը մատնանշում եր «գյուղացիության հետ ճիշտ փոխհարաբերությունների» անհրաժեշտությունը: Ընկ. Լենինը փրկությունը սրա մեջ եր գտնում եր, «10—20 տարի ունենանք ճիշտ փոխհարաբերությունն եր գյուղացիության հետ—և հաղթությունը համաշխարհային մասշտաբով ապահովված ե (նոյնիսկ յեթե ձբդագվեն պրոլետարական հեղափոխությունները, վոր աճում են), այլապես—բերողվարդեական տեսորի 20—40 տան-ջալից տարիները»:<sup>1</sup>

«Գյուղացիական ազգաբնկչության ճնշող մեծամասնություն ունեցող յետամաց մի յերկրի բանվորական կառավարության գրության հակասությունները—գրում եր Տրոցկին—իրենց լուծումը կարող են գտնել միայն միջազգային մասշտաբով, պրոլետարիատի համաշխարհային հեղափոխության կովաղաշտում»:<sup>2</sup>

Տրոցկին մեզ գուշակում եր պրոլետարիատի և գյուղացիության դաշինքի խղումն, վոչնչացումն, «թշնամական նդհարումն» նրա հետ: Ընկ. Լենինը ավանդել ե և պատվիրել ե մեզ պահպանել աչքի լույսի պես, խնամել և ամրապնդել պրոլետարիատի և գյուղացիության դաշինքը: Տրոց-

<sup>1</sup> Լենինյան ժողովածու, IV, եջ 374, «Պարենտուրքի մասին» գրքույկի նախադիմ:

<sup>2</sup> «1905 թ.» Առաջարան, եջ 4.

կին ընկնում եր փակուղու մեջ, տեսնում եր հարցի լուծումը մի միայն միջազգային հեղափոխության մեջ, ընկ. Լենինը յելք եր գտնում նույնիսկ պրոլետարական հեղափոխությունների ձգձգման դեպքում, պատվիրելով պահպանել ճիշտ փոխհարաբերություններ դյուրացիության հետ: Ընկ. Լենինը այդ յելքը կապում եր այն հանգամանքի հետ, վոր մեր յերկիրը վճռական ապես անցնի խոշոր մեքենայական ինդուստրիայի ուղիների վրա:

Յելքը՝ խույզ մեքենայական արդյունաբերության, ամբողջ յերկի ելեկտրիֆիկացիայի մեջ ե

Յեթե 10—20 տարում հասնենք ելեկտրիֆիկացիայի, ամենաին սարսափելի չե մանր հողագործի ինդիվիդուալիզմը—գրում ե ընկ. Լենինը, իր «Պարենտուրքի մասին» գրքույկի նախագծում: Բայց վորում ընկ. Լենինը հենց այդտեղ ել նախազգուշացնում ե, թե «յեթե վոչ ելեկտրիֆիկացիան, վողջ մեկ և անխուսափելի յե դարձը դեպի կապիտալիզմ»: Կապիտալիզմի արմատները պոկելու և ներքին թշնամու հիմքերը խախտելու համար հարկավոր ե, ինչպես մատնացույց ե անում ընկ. Լենինը,<sup>1</sup> փոխադրել յերկրի տնտեսությունը, այդ թվում նաև յերկրագործությունը, նոր տեխնիքական բազայի, ժամանակակից խոշոր արտադրության տեխնիքական բազայի վրա: Այդպիսի բազան հանդիսանում ե միայն ելեկտրականությունը: Կոմունիզմն—ե խորհրդային իշխանություն, պլյուս ելեկտրիֆիկացիան ամբողջ յերկրի: Հակառակ դեպքում յերկիրը մնում ե մանր գյուղացիական և հարկավոր ե վոր մենք

<sup>1</sup> Հատոր XVL, եջ 427—428

այդ բանը պարզ գիտակցենք: Մենք ավելի թույլ ենք քան կապիտալիզմը վոչ միայն համաշխարհային մասշտաբով, այլ և յերկրի ներսում: Դա բոլորին հայտնի յեւ Մենք այդ բանն ըմբռնել ենք և մենք գործն այնպես առաջ կտանենք և կհասցնենք այն դրության, վոր տնտեսական բաղան մանր գյուղացիական լինելուց կդառնա խոշոր արդյունաբերական: Միայն այն ժամանակ, յերբ յերկրը յենթարկված կլինի ելեկտրոֆիկացիայի, յերբ արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը և փոխադրության միջոցների արտադրությունը հիմնավորված կլինի ժամանակակից խոշոր արդյունաբերության տեխնիքական բաղայի վրա, այն ժամանակ միայն մենք վերջնականապես կհաղթենք:

Սրանից ակներե բղխում ե մի բան, վոր մեր յերկրում սոցիալիզմ լիովին կառուցելու հնարավորությանը զուգընթաց, մեզ սպառնում ե նաև մեր յերկրում կապիտալիզմի վերականգնումը: Այդ բանը վոչ մի դեպքում չի կարելի մոռանալ: Կապիտալիզմի վերականգնումը մեր յերկրում թույլ չաւլու համար անհրաժեշտ ե վորքան կարելի յեւ կարձ ժամանակվա ընթացքում ինդուստրացման յենթարկել մեր յերկրը, այսինքն մանր գյուղացիականից նրան դարձնել խոշոր արդյունաբերական, նրա արդյունաբերությունը և գյուղական տնտեսությունը զնել ժամանակակից խոշոր արդյունաբերության տեխնիքական բաղայի վրա: XVI կոնֆերենցիան իր բանաձևի մեջ հատկապես առաջ ե քաշել ընկ. Լենինի այս ցուցմունքը «Սոցիալիզմի միակ նյութական հիմքը կարող ե լինել խոշոր մեքենայական արդյունաբերությունը, վորն ընդունակ ե վերակազմակերպել յերկրագործությունը»: (Տես ընկ, Կալինինի զեկուցման առթիվ ընդունված բանաձեռք): Հենց դրա մեջ եր տեսնում ընկ.

Լենինը գյուղացիության հետ ձիշտ փոխարք երուալ թյունների իրականացումը: Դրա համար անհրաժեշտ ե, վորքան կարելի յեւ արագ կերպով և անդադար զարգացնել մեր արդյունաբերությունը, շինել նոր ֆաբրիկներ և գործարաններ, անցկացնել նոր յերկաթուղիներ, կամուրջներ, ջրանցքներ, կառուցել նոր խոշոր խորհրդային տնտեսություններ, պահպանել և զարգացնել հին խորհրդ՝ տնտեսությունները և ամեն կերպ աջակցություն ցույց տալ հին և նոր կոլտնտեսությունների զարգացմանը և կազմակերպմանը, նաև զարգացնել ցաք ու ցրիվ չքավոր - միջակ տնտեսությունների արտադրական համախմբումը, կոոպերացումը խոշոր անտեսության մեջ, վոր հենվում ե նոր մեքենայական տեխնիկայի և համայնացված կազմակերպված միատեղ աշխատանքի վրա:

Յերկրի սոցիալիստական վերակառուցման դիլարուրյունները տատանումներ են առաջացնում մաեր - բուրժուական խավերում յեւ կուսակցուրյան անկայուն տարրերի մեջ

Գյուղում կուլակի դեմ և քաղաքում նեպմանի դեմ ուժեղացքրած արշավանքը — կապիտալիստական տարրերի կողմից կատաղի ընդդիմադրություն ե առաջացնում: Կապիտալիզմի արմատների պոկումը և վոչնչացումը անխուսափելիորեն ուղեցվում ե զասակարգային կովի սաստկացումով: Զարգացման ներկա ժամանակաշրջանում, քանի սոցիալիստական տարրերը ուժեղ ու վճռականորեն են արշավում և գուրս մղում կապիտալիստականը, այնքան ավելի սուր և բորբոքվում զասակարգերի կոփլը:

Ըսկ. Լենինն այդ բանը նախատեսել եր և իր ժամանակին դրա մասին գրել:

Վերակառուցման շրջանի դժվարությունները, կովի բարդությունն ու լարվածությունը, միջազգային կապիտալիզմի ձնշումը, մեր յերկրի տեխնիկական-տնտեսական յետավեցությունը, հացամթերման հարցի հետ կապված լարված վիճակը, կուլակության կատաղի ընդիմագրությունը ազգաբնակչության մանր-բուրժուական շերտերում տատանումներ են առաջացնում: Այս տատանումները դիպչում են նաև պրոլետարիատի այն շերտերին, վորոնք մյուսներից անմիջապես ավելի մոտ և շատ են շփում գյուղացիության հետ: Այս յերերումներով վարակվում են նաև մեր կուսակցության առանձին՝ ավելի անկայուն և բնավորությամբ թույլ խավերը: «Մանր-բուրժուական տարրերը, ամեն կողմից պրոլետարիատը շրջապատելով մանր-բուրժուական տարրերքով, համակում են նրան դրանով, ապականում են նրան այդ տարրերքով, պրոլետարիատի ներսում առաջացնում են շարունակ ուցցիդիֆեր (վորպես կրկնվող հիվանդություններ):» մանր-բուրժուական անկամության, մանրացման, ինդիվիդուությամբի, հափշտակությունից դեպի լքումն անցնելու ուցցիդիֆեր»: Ահա այդ տատանումներն արտահայտվում են վոչ միայն բանվոր դասակարգի վորոշ խավերում, այլ նույնիւ կուսակցության շարքերում:

Սուանց այդ տատանումների հաղթահարման, առաջին հերթին կուսակցության շարքերում, հնարավոր չե սոցիալիզմի հաղթական շինարարությունը, հնարավոր չե հաջող արշավը կապիտալիստական տարրերի վրա: Սոցիալիստական շինարարության հինգամյա ծրագրի առաջադրած ինդիրների լուծումը կարող ե ապահովվել՝ միայն անխնա դիմադրություն ցուցադրելով բոլոր տեսակի տատանումներին՝ բոյլերիկայն պլասավոր կամ կիրառման միջոցին. այդ գծի իրականացումը նշանակում ե բանվոր դասակարգի և գյուղա-

ցիության դաշինքի ամրապնդումը՝ բանվոր դասակարգի ղեկավար դերի հետագա ուժեղացումով, — ցայտուն կերպով շեշտվում ե XVI կուսակցնիքերենցիայի բանաձեռնում:

Բոնած կուրսը — նրանց ուղղակի գցում ե կուակների գիրկը

Կուսակցության տատանվող տարրերը վախենում են դասակարգային կովի սրումից, չեն ուղղում խռովել կուլակից, հույս են տածում, վոր խաղաղ կերպով տեղի կունենա Շկուլակի ներածումը սոցիալիզմի մեջ»: Այս աջերը՝ կուսակցության ոպպորտունիստական տարրերը, հանձնում են պրոլետարական գիրքերը և գնում են խոնարհվելու կուլակի առաջ: Նրանք յերկրի ինդուստրացման դեմ են, մանավանդ գեմ են ծանր արդյունաբերության զարգացման արագացման և արդյունաբերության այն ճյուղի դեմ, վոր արտադրում ե արտադրության միջոցներ:

Սուանց այս արտադրությունների զարգացման մենք չենք կարող ունենալ մետաղ, մեքենաներ, ստանոկներ, տրակտորներ և այլ գործիքներ: Աջ ուկոնիստները կանգնած են թեթև արդյունաբերության զարգացման կողմը, («չթյա», ինչպես ջուհակայինն և այլն) ի հաշիվ ծանր ինդուստրիայի (վոր արդյունաբերում ե հանքեր, մետաղ և այլն, վոր արտադրում ե տրակտորներ, զութաններ, կալսող մեքենաներ և այլն): Նրանք խորհրդային և կոլլեկտիվ տնտեսությունների արագ զարգացման դեմ են, կուլակի վրա դրված հարկերի թեթևացման սլաշտպաններն են, նրանք կանգնած են կուլակին հողը կապալով տալու և բատրակին շահագործելու տեսակետի վրա, նրանք ցանկանում են արտաքին առևտություն մոնոպոլիան խափառել և այլն: Կուլակին յերես տալով նրանք հույս ունեն ի հաշիվ ար-



դյունաբերության զարգացման դադարեցման կամ հապալը ման, կուլակից «մի ավելորդ փութ» հաց ստանալու Սակայն այս վասակար միտքը ձեռնտու յե միայն կուլակային կապիտալիստական տարրերին։ Միևնույն ե, մենք այդ ճանապարհով կուլակից՝ առանց մեր բանվորական իշխանությունը կուլակին հանձնելու, հաց չենք ստանա՛։ Այդ նպատակով չենք կատարել Հոկտեմբերյան հեղափոխությունը, վոր կուլակին հանձնենք իշխանությունը։

XVI-րդ կուսկոնքերենցիան վճռականորեն յետ շպրտեց աջերի կուլակային իդեյաները, վորոնց շեփորն են դարձել կուսակցության աջ ուղղորդունիստական տարրերը, և մատնանշեց այն միջցները, վորոնց ողնությամբ ապահովված կլինի մեր յերկրում սոցիալիզմի հաղթանակը։

Ենչո՞ւ յե կուսակցությունը կովել յեվ շարունակում է կովել Տրոցկիզմի դեմ

Կուսակցությունը չհրաժարվեց և՛ տրոցկիստների և բոլոր՝ արոցկիզմի կողմը հարողների գեմ պայքար մղելուց։ Մատնանշելով, վոր «ներկա պայմաններում կուսակցության ներսում ամենաժեժ վտանգը հանդիսանում է աջ թեքումը», XVI կուսկոնքերենցիայի բանաձեռ միաժամանակ մատնանշում ե, վոր «կուսակցությունը ջաղջախիչ հականարված կտա վոչ միայն աշ թեքմանը, այլ և նրանց, վորոնք լենինյան գծից թեքվողների վերաբերմամբ հաշտվողական տրամադրություններ ցույց կտան»։

Տրոցկիստները զիտում են մեր գյուղը իբրև մի դաշտ, վորը պրոլետարիատը «հանուն սոցիալիզմի», իմ-պերիալիստների պես, իրավունք ունի շահագործելու։ Յե, Պրեռբաժենսկին՝ տրոցկիստների անդամանության գրագիրը կուտակած է այս պատճենության մեջ։

ապրանը գրում եր — «...սոցիալիստական կուտակումը ստիպված ե հենվել տնտեսության նախասոցիալիստական ձևերի շահագործման վրա...»։<sup>1)</sup>

Ճաք ու ցրիվ մանր-գյուղացիական տնտեսությունների անսահման ծով — անա դա յե անտեսության նախասոցիալիստական ձևերը մեր պայմաններում։ Սակայն պրոլետարիատի դիկտուրայի անելիքը, ինչպես այդ վորոշել են պրոլետարիատի մեծագույն ուսուցիչները՝ ընկ. Լենինը, Կ. Մարքսը և Ֆրիդրիխ Ենդելսը, կայանում ե գյուղացուն ոգնությունն ցուցադրելու և վոշ թե նրան շահագործելու մեջ։ Լենինը նայում եր աշխատավոր գյուղացուն, իբրև պրոլետարիատի դաշնակցի, վորին պրոլետարիատն իր յետեկց տանում և զետի սոցիալիզմ՝ վերադաստիարակելով, վերամշակելով նրան, ոգնելով նրան բարձրանալ և հաղորդակց լինել սոցիալիստական տեխնիկային ու ազատվել «գյուղի իդիոտիզմից», իր թզուկաչափ տնտեսության ապարայուն և տաժանակիր աշխատանքից, վոր դատապարաված և կապիտալիզմի անհաշիվ շահագործման։ Իսկ ըստ Պրեռբաժենսկու այնպես և գուրս գալիս, վոր գյուղացիությունը — դա պրոլետարիատի զիկտատուրայի սխալմի մեջ մի «ոտար մարմին» ե, վորը դատապարաված և սոցիալիստական սեկտորի կողմից «շահագործման» և «լափման»։ Ըստ վորում վորքան քիչ և զարգացած սոցիալիզմին անցնող յերկիրը, ինչպես որինակ մերն ե, այնքան «ավելի և» այդ յերկիրի պրոլետարիատը ստիպված կլինի «հենվել տնտեսության մինչսոցիալիստական ձևերի շահագործման վրա»։ Մի այլ տեղում Պրեռբաժենսկին գրում ե թե «վորքան տնտեսապես և

1) «Основной закон социалистического накопления», Вестник Коммунист. Академии, 1924, № 8.

Նորուստրիապես ավելի յե զարգացած այն յերկիրը, վորտեղ հաղթահարում և սոցիալիստական հեղափոխությունը, այնքան ավելի անհրաժեշտ ե այդ յերկրի պրոլետարիատի համար՝ «իր պրոդուկտները գաղութն երի պրոդուկտների հետ փոխանակելու անելվիվալենտությունը (անհավասարժեքը) նվազեցնել», այսինքն գաղութների շահագործումը պակասեցնել:

Տրցիկիսները բանվորների յել զյուղացիների  
դաշիներն դեմ են

Ուրեմն ավելի յետամաց յերկրի պրոլետարիատին անհրաժեշտ ե ավելացնել իր գաղութների շահագործումը: Սա բացարձակ անմտություն եւ: Պրոլետարիատը պայքարում է շահագործումը վոչնչացնելու համար, գաղութները շահագործումից ազատագրելու համար, ընդհանրապես հոգուտ գաղութների վերացման, բոլոր ժողովուրդների և բոլոր աշխատավորների հավասարության: Ել չենք խոսում այն մասին, թե վնրքան արատառոց և անմիտ ե հնչում պրոլետարի բերնում գաղութների շահագործումն «ուժեղացնելու» կապիտալիստական գաղափարը: Պրոլետարիատը չի կարող իր գաղութներն ունենալ: Գաղութներ ունեն միայն իմպերիալիստական բուրժուական յերկրները: Յեվս առավել՝ պրոլետարիատը չի կարող հնչուվել գաղութների շահագործման վրա: Պրոլետարիատը չի կարող իրեն ազատագրել կապիտալիստական շահագործումից՝ չաղատագրելով և միաժամանակ չպայքարելով գաղութային ժողովուրդների շահագործման դեմ: Մեկն առանց մի կարելի յերկարակայել: Նման գաղափարները պարզապես տանում են դեպի պրոլետարիատի և զյուղացիության

միության խախտումն և պրոլետարիատի դիկտատուրայի վոչնչացումը:

Կուսակցությունը վճռական կերպով դեն շպրտեց արոց-կիստների այս հակալենինյան ցնորամտությունները:

Աջ ոպպորտունիսները դեմ են, վոր պրոլետարիատը դեկալարի գյուղացիուրյանը

Սակայն վոչ պակաս վճռականությամբ կուսակցությունը դեն և շպրտում և պիտի պայցքարի կուսակցության այն աջ տարրերի ոպպորտունիստական գաղափարների դեմ, վորոնք (այդ տարրերը) կուլակի աղդեցության տակ են ընկնում: Աջերը ձևականորեն դեմ չլինելով լենինյան ավանդին՝ պահպանել պրոլետարիատի և զյուղացիության միությունը, գործով բացասում են, վոր պրոլետարիատը դեկավարեց գյուղացիությունը:

Բնկ. Լենինը չեր յենթադրում պրոլետարիատի դիկտատուրայի բարգավաճումն առանց պրոլետարիատի դեկավար դերի ուժեղացման: Յեթե բանվոր դասակարգը չզեկավարեց գյուղացիությանը և այդ դեկավարությունը չուժեղացնե, — պրոլետարիատի և զյուղացիության սոցիալիստական միությունը կխախտվի: Զքավորմիջակ գյուղացիության դեկավարությունը կանցնի կուլակների, հականեղափոխականների ձեռքը: Այս բանը անխուսափելիորեն կհասցնի պրոլետարիատի դիկտատուրայի անկման և հին կապիտալիստական կարգերի վերահստատման: Ուստի կուսակցությունը նույն վճռականությամբ դեն և շպրտում աջերի ոպպորտունիստական, կուլակային գաղափարները և վճռականորեն կպայքարեց ամեն մի խմբակի կամ կուսակցության առանձին անդամների ամեն տեսակ փորձերի դեմ՝ շեղել կուսակցու-



ամյակին նիշված են ներդնել 10 միլիարդ ռուբ. — համարյա 4 անգամ ավելի:

Անցյալ տարիներում ելեկտրիֆիկացիայում ներդրված եր մոտ մեկ միլիարդ ռուբլի (0,9 միլիարդ), նիշված ե ավելացնել համարյա յերեք անգամ ավելի — այն ե 3,1 միլիարդ ռուբլի:

Ինչպես են ավելանալու յերկրի հարստությունները  
(«հիմնական ֆոնդերը»)

Նիշված ներդրումների շնորհիվ յերկրի հարստությունը համարյա կրկնապատկվելու յեն: 1927/28 թ. յերկրի հիմնական ֆոնդերը հավասար ելին 70 միլիարդ ռուբլու: 1932/33 թ. այդ ֆոնդերը հասնելու յեն 128 միլիարդի — ավելանալու յեն 82%: Արդյունաբերության հիմնական ֆոնդերը ավելի ևս արագ են ավելանում: 9,2 միլիարդից 1927/28 թ. նրանք հասնում են 23,1 միլիոն ռուբլու՝ հինգամյակի վերջը, — ավելանում են ավելի քան յերկու և կես անգամ: Ելեկտրիֆիկացիայի ֆոնդերը ավելանում են հինգ անգամ, — 1 միլիարդից հասնում են 5 միլիարդի: Յերկաթուղային արանսպորտի ֆոնդերը ավելանում են 10 միլիարդից մինչև 17 միլիարդ ռուբլու — 70% աճումն: Գյուղական անտեսության հիմնական ֆոնդերը այնքան բուռն չեն աճում — 28,7 միլիարդ ռուբլուց հինգամյակի վերջը հասնում են 38,9 միլիարդ ռուբլու — 35% աճումն:

Ինչքան ապրանքներ ե արտադրելու յերկիրը

Վորպես հետևանք այդ վիթխարի ներդրումների, մենք ունենալու յենք յերկրի արտադրության զորեղ աճումն, մեր ժողովրդական անտեսության պրոդուկցիայի զորեղ ավելացումն:

Մեր արդյունաբերությունը 1927/28 թվին արտադրել ե 18,3 միլիարդ ռուբլու պլոտուկցիա, ապրանքներ: Հինգամյակի վերջը 1932/33 թ. արդյունաբերությունը արտադրելու յե 43,2 միլիարդ ռուբլու պլոտուկցիա, այսինքն 3 անգամ ավելի շատ, քան արտադրում եր ամբողջ արդյունաբերությունը պատերազմից առաջ, ցարական շրջանում: Գյուղական անտեսությունը 16,6 միլիարդ ռուբլուց (1927/28 թվին) հինգամյակի վերջը իր պլոտուկցիան ավելացնելու յե մինչև 25,8 միլիարդ, — կամ մեկ ու կես անգամ ավելի, քան արտադրում եր պատերազմից առաջ: Յերկաթուղիների աշխատանքը համարյա յերկու անգամ բարձրանում ե, — աշխատանքը համարյա յերկու անգամ բարձրանում ե, — 88 միլիարդ տոննո-կիլոմետրից հասնելու յե 163 միլիարդ տոննո-կիլոմետրի:

Ամբողջ ժողովրդական անտեսության դուրս պլոտուկցիան 24,4 միլիարդ ռուբլուց (1927/28 թ.) հասնելու յե 49,7 միլիարդի (1932/33 թ.), — ավելի քան կրկնապատկվելու յե:

Ինչ միջոցներով ե իրականացվելու յերկրի արագ ինդուստրիալիզացիան

Միայն այս թվանշաններն արդեն բավական են վորպեսզի դատենք թե ինչ աստիճան է ապահովված մեր յերկրի ինտուստրիալիզացիան: Այդ թվանշաններից մենք տեսնում ենք, վոր ամբողջ ժողովրդական անտեսության մեջ այդ հինգ տարվա ընթացքում կապիտալ ներդրումների գումարը, անցյալ հինգամյակի հետ համեմատած, յերկու անգամ ավելի յե: Գյուղական անտեսության մեջ ներդրումներն ավելանում են մեկ ու կես անգամ: Խսկ արդյունաբերության մեջ ներդրումները, չնայած զյուղական անտեսության մեջ ներդրումների մեծ ծավալին, — ավելի շատ են աճում — այն ե՝

նայագործական արդյունաբերության ընդհանուր պլոտովկցիան ավելանալու յե 3,5 անգամ։ Գյուղատնտեսական մեքենաների արտադրությունը 4 անգամ ավելանալու յե։ Կառուցվելու յեն Ստալինգրադում և Ռուբալում տրակտորի գործարաններ, դտիչների և այլն գյուղատնտեսական մեքենաների գործարան՝ Ռոստով Դ.Վ. և այլն։ Տրակտորների արտադրությունը, որինակ, 30 հազարից հասնելու յե 60 հազարի։ 1933/34 թ. յենթադրվում է 100,000-ից ավելի տրակտորներ բաց թողնել։ Պետք է նկատի ունենալ վոր ցարիզմի ժամանակ մեր յերկրում տրակտորներ ամեննեն չկային, և մեր կապիտալիստները չգիտեյին շինել։ Կառուցվելու յե թուրքեստան — Սիրիի հսկայական յերկաթուղին, վոր բարգավաճելու յե անապատները և կենդանացնելու յե այդ ահազին յերկիրը։ Այդ տարիների ընթացքում Սև ծովը միացնելու յեն կասպից ծովի հետ՝ Վոլգա-Դոնի արխով։ Քիմիական պարարտացման միջոցների արտադրությունը մեծանալու յե ավելի քան 40 անգամ։ 175 հազար տոննից 1927/28 թ., քիմիական պարարտացման միջոցների արտադրությունը կհասցնվի 8 միլիոն տոննի և ավելի։ Արդյունաբերության մի շարք ճյուղերում կատարվելիք հեղաշրջումը, մասնավոնդ քիմիական արդյունաբերության շրջանում, հիմնված ե կշռած և ստուգած հաշիվների վրա։ Աշխարհում չտեսնված սոցիալիստական շինարարության այդ թափը ամրացնելու յե մեր եկոնոմիական անկախությունը կապիտալիստական յերկրներից և սոցիալիզմի գարգացման, Խորհուրդների Միության ինքնապաշտության ուժեղացման հետ միասին ավելի զորեղ գործոն և դառնալու համաշխարհային հեղափոխության զարգացման համար։

Աշխարհի եկոնոմիկայում ԽՍՀՄ տեսակատար կշռը առաջին տեղերից մեկն և գրավելու Զուգունի համաշխարհային

արտադրության մեջ — ԽՍՀՄ վեցերորդ տեղից — ուր կանգնած ենք մենք այժմ — գրավելու յենք յերրորդ տեղը։ Մեզնից առաջ են լինելու միայն Գերմանիան և Ամերիկայի Միացյալ Նահանգները։ Քարածուխի արտահանման մեջ հինգերորդ տեղից կանցնենք չորրորդ տեղը։

Ենթանիվ սոցիալիստական օմարարության դեպի վար կողմն են կատարվելու դասակարգային ուժերի տեղափոխումները

Ժողովրդական տնտեսության զարգացման հինգամյա պլանի կերպումն ընդունված և կուսակցական ԽVI կոնֆերենցիայի կողմից և ահազին հեղափոխություն և կատարելու դասակարգերի փոխադարձ հարաբերությունների մեջ։ Յերկրի սոցիալիստական սեկտորը, սոցիալիստական տնտեսությունը չափազանց զարգանալու յե և իրմով վորոշելու յե ԽՍՀՄ ամբողջ եկանոմիկայի գեմքը։ Կապիտալիստական տարրերի ուժը իրաստ ջլատված կլինի։ Յերկրի սոցիալ-եկանոմիական դեմքը լիովին փոխվելու յե։ մենք կունենանք սոցիալիզմի զորեղ աճումն մեր յետանաց յերկրում։ Յերկրի սոցիալական առաջադիմությունների, դասակարգային ուժերի փոփոխության և տեղափոխման մասին կարելի յե դատել հինգամյակի այն տվյալներից, վոր վերաբերում են յերկրի հիմնական գոնդերի կառուցման ու բաշխման փոփոխություններին։ ըստ այդ գոնդերի սոցիալական ծագման։ Յեթե 1927/28 թ. յերկրի հիմնական գոնդերը բաժանում են սոցիալիստական, համայնացված սեկտորի և մասնավոր (գյուղացիական տնտեսության հետ միասին) սեկտորի միջև համարյա հավասար կերպով, ապա հինգ տարուց հետո, համայնացված սեկտորի հիմնական գոնդերին պատկանալու յեն արդեն յերկրի բոլոր գոնդերի յերեք քառորդ

Ժամը՝ Պետական և կոռուպերատիվ սեկտորին 1927/28 թ. պատկանում է յերկրի բոլոր ֆոնդերի 52,7%, մասնավոր սեկտորին ընկնում է 47,3%։ 1932/33 թվին դրությունը խիստ փոխվում է։ Պետական և կոռուպերատիվ (համայնացված) սեկտորը ունենալու յե 68,9%, մասնավորը — միայն 31,1%։ Պետական սեկտորը 51,0%-ից աճում է մինչև 63,6%։ Կոռուպերատիվ սեկտորը, թեև իր տեսակարար կշռով սաստիկ զիջում է պետականին, սակայն իր զարգացման արագությամբ սաստիկ գերազանցում է նրան։ Կոռուպերատիվ սեկտորի հիմնական ֆոնդերը աճելու յեն 1,7%-ից մինչև 5,3%։

Մասնավոր սեկտորի հիմնական ֆոնդերը հինգամյակի ընթացքում կորցնում էն իրանց սկզբնական ֆոնդերի ավելի քան մի յերրորդ մասը — 16,2%, այսինքն՝ 47,3%-ից (1927/28 թվին) կրճատվում է մինչև 31,1%։

Ավելի ուժեղ ե զարգանալու սոցիալիստական սեկտորի արտադրելիք ընդհանուր պլրոդուկցիան։ Սոցիալիստական սեկտորի տեսակարար կշիռը արդյունաբերության մեջ աճելու յե 80% մինչև 92%, գյուղական տնտեսության մեջ — 2% մինչև 15%, այսինքն ավելանալու յե 7,5 անգամ։ Մասնավաճառային շրջանության մեջ սոցիալիստական սեկտորը 75%-ից աճելու յե մինչև 91%, այսինքն համարյա ամբողջովին կլանելու յե մանրավաճառային շրջանառությունը։

### Կոլխոզների յել սովորությունը անումը

Նիշվում է կոլխոզների և սովորությունների բուռն աճումն, նրանց տեսակարար կշիռը գյուղական տնտեսության մեջ չափազանց աճելու յե, նրանք բոլորովին բացառիկ ազդեցություն հն ունենալու մեր յետամնաց, մանրասեփականա-

ման այդ տեմպը, յերբ նույնիսկ եկոնոմիսական բռւռն զարգացման պերիոդում, ինչպիսին, որինակը Ռուսաստանը ապրում եր 1900—1912 թ., պրոդուկցիայի և ազգային յեկամտի աճումը չեր համար այն տեմպին, վոր նիշվում է հինգամյակի պլանով։

Առաջ բերենք նաև հայտնի եկոնոմիստ Բաղարովի կարծիքը, վորը իրեն դասում է մարքսիստների շարքում։ Նա յել հնարավոր չե համարում արագ տեմպ ընդունել։ Այստեղ հետաքրքիր ե նկատել վոր նրա կարծիքով արագ տեմպին խոչընդուա հանդիսացող պատճառներից մեկը կայանում ե նրանում, վոր «...այժմ արդեն մեր միջին աշխատավարձը ավելի բարձր ե քան 1913 թվին, իսկ այդ նշանակում ե, վոր կուտակման պրոցեսի տեմպը այժմ ավելի դանդաղ ե քան 1913 թվին»։

Բուրժուական պրոֆեսորների շարքումն են կանգնում նաև այս ուկանիսները

Աջ ուկանիստները մեր կուսակցության մեջ հինգամյակի նիշած տեմպերը նույնպես մեր յերկրի ուժից վեր են համարում և պնդում են նրանց նվազեցման վրա։ Նրանք ցանկանում են նվազեցնել մանավանդ արտադրության միջոցների արտադրության զարգացման տեմպը, յերկրի ինդուստրալիզացիայի հիմքի տեմպը, վոր կոչված ե խթան լինելու ամբողջ արդյունաբերության և ամբողջ ժողովրդական տնտեսության զարգացման համար։ Աջերին թվում ե, վոր յեթե մենք այն միջոցներով, վոր դնում ենք ծանր արդյունաբերության մեջ (կամ, ասենք քիմիական արդյունաբերության մեջ, վոր դյուղական տնտեսությունը մատակարարելու յե քիմիական պարարտացման միջոցներով և դաշտերի վնասատուների գեմ կովելու միջոցներով), զարգացնենք մեր թեթև արդյունա-

բերությունը (վորը մեքենաներ, տրակտորներ, խոփաններ և այլն չի արտադրում, այլ արտադրում ե լոկ սպառման իրեղեններ, որինակ չիթ, մահուդ, կոշիկներ և այլն), իսկ խոփաններ, տրակտորներ և քիմիական պարարտացման միջոցները գնենք արտասահմանում, մենք, իբր թե, ավելի շուտ կզարդացնենք մեր տնտեսությունը և ավելի շատ շահույթ կտանանք այդ գումարներից:

Լավ, իսկ ի՞նչ անենք այն դեպքում, յեթե կապիտալիստները չցանկանան ծախել մեզ իրանց մեքենաները (յենթադրենք հենց այդ նույն թեթև տեխստիլ արդյունաբերության համար) կամ չցանկանան ծախել մեզ քիմիական պարարտացման միջոցները: Ի՞նչ անենք, դադարեցնենք դաշտերի մշակումը կանգնեցնենք մեր ֆարբիկները ու գործարանները: Կապիտալիստներին հենց այդ և հարկավոր Նրանք սրտատրով սպասում են այդ որին: Այն ժամանակ նրանք մեզ իրանց մատներով կլինղեյին:

Սակայն կուսակցությունը յերբեք այդ քայլը չի անի: Աջերն իրանց կուրությամբ պլրութարիատի դիկտատուրան մղում են դեպի իմպերիալիստների լուծը: Ուստի և կուսակցությունը անխնա պայքարելու յե այն աջերի դեմ, վորոնք չեն ցանկանա հրաժարվել իրանց վնասակար իդեաներից, վոր նրանց ներշնչել են կապիտալիստներն ու կուլակները:

### Ո՞վ ե իրավացի

Սակայն մեզ կարող են հարցնել. — անցյալ տարիների պրակտիկայով հաստատվում ե արդյոք զարգացման այդպիսի արագ տեմպի հնարավորությունը: Կյանքից վերցրած փաստերը սովորաբար ամենալավ արգումենտներ և ապացուցներն են: Տեսնենք թե ինչպես եր զարգանում մեր տնտեսությունը

Հինգամյակի նիշած զարգացման տեմպը գերազանցում է Սմերիկայի զարգացման բոլոր տեմպերը և առհասարակ պատմության մեջ մինչեւ այժմ հայտնի զարգացման բոլոր տեմպերը: Մեր տարեկան աճման միջին տոկոսը հավասար է 20—22%: Հասկանալի յե, վոր զարգացման այս անլսելի տեմպը կարելի յե բացատրել բացառապես մեր պրոլետարական պետություններով: Յեկ ահա հենց այդ բանն ե վոր չեն կարողանում համկանալ բուրժուական ամենախոշոր գիտնականները: Նրանք կասկածի յեն յենթարկում մեր զարգացման սոցիալիստական տեմպի հնարավորությունները և կրկնում են մեր կորուստն այդ ճանապարհին:

Բուրժուական գիտականների անրենդունակ են հասկանալու թե ինչպես բանվորներն առանց կապիտալիստների կարող են այդպես արագ զարգացնել իրենց յերկիրը

Այդպես, բուրժուական ամենախոշոր գիտնականներից մեկը, Գրինեեցիից, գեռ 1918—1919 թ. պնդում եր, վոր առանց արտասահմանյան կապիտալի մեր արդյունաբերությունը չոկտեմբերյան հեղափոխությունից հետո անկարող ե զարգանալ: Վառելիքի արտահանման և չուգունի արտադրության զարգացման նրա նշանակած տեմպը շատ ավելի նվազ եր քան այն տեմպը, վոր մենք նիշում ենք այժմ:

Յեկ նույն իսկ այդ տեմպն եւ, ինչպես հավատացնում եր Գրինեեցիին, հնարավոր և միայն արտասահմանյան կապիտալի ընդարձակ մասնակցության դեպքում: Նրա հաշվով մեր արդյունաբերությունը կարիք ունի 15—20 միլիոնը (վոսկով) ներդրումի:

Նա յենթադրում եր, վոր յերկրի ներսում կարելի կլինի դաշնել վոչ ավելի քան 4—5 միլիարդ ռուբլի, իսկ մեա-

ցած 12—15 միլիարդ ռուբլին (վոսկով) պետք է վերցվեն արտասահմանից: Յեթև Գրինևեցկու ծրագիրն իրավուրծվեր, մեր յերկիրը անյելանելի աղքատության մեջ կընկներ և արտասահմանյան կապիտալի ճորտը կդառնար:

Յեվ այժմ, հեղափոխությունից 10 տարի հետո, բուրժուական գիտնականները շարունակում են թութակի պես կրկնել այն, ինչ վոր Գրինևեցկին առհասարակ ասել է 1918 թվին:

Բորժուական պրոֆեսորների կարծիքները մեր պլանի մասին

1927 թ. բուրժուական պրոֆեսոր Ա. Ս. Նիկիտսկին հինգամյա պլանի առթիվ գրում եր, վոր «պլանի տեմպը սաստիկ չափազանց ված ե... Պլանում ընդունած տեմպի ոգտին բերած արդումնուները համարյա միշտ զուր են անցնում: Հարկավոր ե ավելի զգուշ և իրական պլան»:

Զհասկանալով և հեզնելով պրոլետարիատի դիկտատուրայի այն առավելություններն ու առանձնահատկությունները, վորոնք մեր կարծիքով ապահովում են զարգացման արագ տեմպը, Ա. Ս. Նիկիտսկին գրում եր, վոր այդ արդումնատները «համարյա վոչ մի արժեք չունեն» և վոր «միայն յերրորդ (!) հինգամյակում կարելի ե սպասել ներկա և հետեւյալ հինգամյակում կատարված կապիտալ ծախքերի զգալի ազդեցությունը մեր զարգացման տեմպի վրա»:

Նույնը գրում եր պրոֆեսոր Ա. Վայնշտեյն: Նա ցույց եր տալիս վոր «հինգամյակի հիմնական պակասությունը զարգացման պրոեկտի մեջ ե... չափազանց արագ տեմպի մեջ ե, վոր ուժից վեր ե և իրական չե»:

Իսկ եկոնոմիստ Ա. Դեղնեն իր մի հոդվածում քմծիծաղ հարցնում ե. «Ինչպես կարելի յե լուրջ ընդունել զարգաց-

մակրոգի տեսակարար կշռի ավելացման և նրա դեկավարիչ դերի զորեղացման տեսակետից: Դա կհանդիսանա պրոլետարիատի դիկտատուրայի ամրացման հիմնական պայմանը:

Խիստ աճելու յեն նաև յերկրագործական բնակչության յեկամուտները, չնայած վոր, ինդուստրիալացացիայի տեմպի արագացման հետևանքով, յերկրագործական բնակչության յեկամուտների բաժինը պակասում ե՝ 49,8%-ից մինչև 42,5%: Այդպես, հինգամյակի վերջը յերկրագործական բնակչության յեկամուտները ավելանալու յեն 67%-ով:

Միաժամանակ աճում ե և պետության մասցալ բյուջեն (նետո): Հինգամյակում բյուջեն 19 միլիարդ ռուբլուց հասնում է 51 միլիարդի (աճումն 166,7%): Ժողովը դական յեկամտի վերաբերմաբ 1932/33 թվին բյուջեն կազմելու յե 30,9%, փոխանակ 25,9%՝ 1927/28 թվին: Բյուջեյի տեսակարար կշռի ավելանալը ժողովրդական յեկամտի նկատմամբ՝ ժողովրդական յեկամտի միաժամանակ բարձրացումով — ամենալավ ապահովությունն և ժողովրդական անտեսության առաջադիմության՝ լայնացրած վերաբարդության հիմունքով:

Հինգամյակի նախագծած բյուջեյի աճումը հնարավորություն ե տալու, վոր ժողովրդական անտեսության փինանսավորումը, նախընթաց հինգամյակի հետ համեմատած, լայնացվելու ըրս անգամ (339%), և սոցիալ-կուլտուրական կարիքների համար միջոցներ բաց թողնվի յերեք անգամ ավելի (276%):

Հինգամյակի իրազործելու յե կենինի պատգամը — հասնել յեվ գերազանցել կապիտալիսներին

Արդյոք հինգամյակի նիշած զարգացման տեմպը ապահում ե ընկ. կենինի պատգամը — «եկոնոմիական և տեխնիքական տեսակետից հասնել և գերազանցել առաջադեմ կա-

պիտալիստական յերկրները»: Յեթե մենք համեմատենք մեր և կապիտալիստական յերկրների զարգացման տեմպը, ապա կտեսնենք, վոր հինդամյալի նիշած ուղին վճռականապես մոտեցնում ե մեզ այդ հիմնական խնդրի իրագործման:

Ինչ արագործյամբ եր զարգանում մեր յերկիրը  
կապիտալիստների որով

Նախ տեսնենք, թե ցարական Ռուսաստանում ինչ զլություն եր տիրում: Հեղափոխությունից առաջ Ռուսաստանի արդյունաբերության պրոդուկցիայի աճումն սովորական տարիներում կազմում եր 3% և նույնիսկ ավելի պակաս: Զարգացման միջակ տարիներում աճումը հասնում եր 5%: Վերջապես զարգացման ամենաբարեհաջող տարիներում աճումը հասնում եր 8%: Այդպես եր իրերի գրությունը ցարական Ռուսաստանում, ուր աշխատանքի աժանության պատճառով արտասահմանյան կապիտալի մեծ միջամտություն կար:

Մեր սոցիալիստական զարգացման տեմպը շատ ավելի արագ է քան կապիտալիստական Ամերիկայի զարգացման  
ամենաարագ տեմպը

Վերցնենք, որինակ, այնպիսի յերկիր, ինչպես Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգները, վորը կապիտալիստական բոլոր յերկրների միջն զարգացման ամենաբարդ տեմպ ունի: 1900 — 1910 տասնամյակում աճումը հավասար եր 4%, 1890 — 1880 տասնամյակում աճումը հավասար եր 4,9%. 1880 — 1870 տասնամյակում աճումը հավասար եր 5,8%. 1870 — 1760 թ. աճումը հասնում ե 8%: Աման ամենաբարդ տեմպը 70 — 80 տարի սրանից առաջ եր, 1850 — 1860 թ., յերբ աճումը հասնում եր 8,7%:

աիրական, ցաքուցրիվ գյուղական տնտեսության բարեփոխման վրա: 1933 թվին, համայնացված սեկտորում մասնակցելու յեն մոտ 20 միլիոն մարդ: Ցանքսի մակարդակի համարյա մեկ հինգերորդ մասը պատկանելու յե համայնացված սեկտորին (սովորողներին և կոլխոզներին) և հասնելու յե 26 — 27 միլիոն հեկտարի, վորից 5 միլիոն հեկտար սովորողներին և 22 միլիոն հեկտար կոլխոզներին: Դա 1933 թ. մեզ հնարավորություն կտա համայնացված սեկտորից ստանալու մոտ 84 միլիոն ցենտներ ապրանքային հաց կամ 500 միլիոն ֆիթից պակելի, դրա թվում կոլխոզներից սպասվում ե մոտ 50 միլիոն ցենտներ, իսկ սովորողներից վոչ պակաս քան 34 միլիոն ցենտներ:

Յեթե ներկայումս վորեւ 10% կուլակներ և ունեորմիջակ գյուղացիք ամբողջ ապրանքային հացի (վոր շուկայի հանվում վաճառելու համար) 30% ունեն իրանց ձեռքում, հինգամյակի վերջը համայնացված սեկտորից մենք պետք ե ստանանք ապրանքային հացի վոչ պակաս քան 40%: Դա բավականաչափ կամբացնի պրոլետարական պետության դիրքերը և քաղաքաներին մատակարարելու գործը կապատի այն կուլակներից, վորոնք հացի խոշոր պահեստներ են իրենց մոտ պահում և վորոնք կատաղի կերպով դիմադրում են սոցիալիստական սեկտորին:

Ինչպես ե իրագործվելու ընկ. Լենինի  
կոռպերատիվային պլանը

Բնկ. Լենինի պատգմամը, նրա կոռպերատիվային պլանը հինգամյակի վերջը մեծ մասամբ իրագործված կլինի:  
Կոլխոզների ընդհանուր պրոդուկցիայի բաժինը ավելի քան 10 անգամ մեծանալու յե: Յեթե 1927/28 թ. նա հա-

վասար եր 1%, 1932/33 թ. հասելու յե 11,4%: Մանր կոռոպերատիվ արդյունաբերության պրոդուկցիայի բաժինը մեծանալու յե ավելի քան 2,5 անգամ, — 19,4% ից հասնելու յե 53,8%: Մանրավաճառային շրջանառության կոռպերացումը 60,2%-ից հասնելու յե 78,9%:

Դյուզատնեսական կոռպերացիան ընդգրկելու յե գյուղացիական անտեսությունները լրակում անդամակելի — 1927/28 թ. բոլոր տնտեսությունների 37,5%-ից հասնելու յե 1932/33 թ. 85%-ի, կամ թէ՝ փոխանակ 9,5 միլիոնի, ընդգրկելու յե 23,6 միլիոն անտեսություններ: Սպառողական կոռպերացիայի անդամների թիվը քաղաքում 8,7 միլիոնից հասնելու յե 16,5 միլիոնի — համարյա կրկնապատկվելու յե: Իսկ գյուղերում ավելի ևս, — սպառողական կոռպերացիայի անդամների թիվը 13,9 միլիոնից հասնելու յե 31,8 միլիոնի:

Ինչպես են ավելանալու բանվորների յել գյուղացիների լեկամուները

Ժողովրդական յեկամուտը ամեն տարի ավելանալու յե վոչ պակաս քան 12% և հինգամյակի վերջը ավելի քան կրկնապատկվելու յե, այն և 1927/28 թվի 24,4 միլիարդ ռուբլուց 1932/33 թվին հասնելու յե 49,7 միլիարդի: Դա չորս անգամ գերազանցում ե ժողովրդական յեկամտի զարգացման անմասպ ցարի ժամանակ, և գերազանցում ե ամեն մի բուրժուական յերկի տնտեսության զարգացման անմասը:

Արդյունաբերական բանվորների սեալ (փաստական) աշխատավարձը հինգամյակի վերջը ավելանալու յե 71%: Բանվոր գասակարգի յեկամտի բաժինը ամբողջ ժողովրդական տնտեսության յեկամտի մեջ 32,1%-ից հասնելու յե 37%: Դա առանձին նշանակություն ե ստանում ամբողջ բանվոր դա-

#### IV. ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ԵՎ ՄԻԶԱԿ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ԹԵԹԵՎԱՑՈՒՄՆ

XVI կուսկոնքերենցիայի քննության յենթակա յերկրորդ հարցը — «գյուղական անտեսության զարգացման ուղիների և միջակ գյուղացիության հարկային թեթևացման» հարցն եր: Այդ հարցի մասին զեկուցեց ընկ. Կալինինը (նախագահ Ա. Ա. Խարցի): Թեև հիմնական հարցերում գյուղական տնտեսչության կամաց անդամների թիվը 13,9 միլիոնից հասնելու յե 31,8 միլիոնի:

Ինչ ուղղությամբ ե զարգանում գյուղական տնտեսությունը կապիտալիզմի որոք: Շահագրգուված են արդյուն չափությունը, ակտուամենայնիվ, նկատի առնելով մեր յերկրում գյուղական տնտեսության ահազին նշանակությունը, այդ հարցը հատուկ քննության յենթարկվեց:

Թէ ի՞նչպես պետք ե զարգանա և ինչպես ե զարգանալու գյուղական տնտեսությունը պրոլետարիատի դիկտատուրայի որոք, ուր, ինչ ուղղուվ և ինչ ուղղությամբ ե ընթանալու միջակ գյուղացիները — այդ հարցերը բանվորների, չքավոր և նրա զարգացումը — այդ հարցերը բանվորների, չքավոր և միջակ գյուղացիների համար ահազին նշանակություն ունեն:

Ի՞նչպես եր զարգանում զյուղական տնտեսությունը կապիտալիզմի ժամանակ, Հոկտեմբերյան հեղափոխությունից առաջ՝ Կապիտալիզմը ծծում եր զյուղի վերջին հյութերը Կապիտալիզի ժամանակ զյուղի բազմամիլիոն մասսաները դատապարտված եյին աղքատության և մահացման։ Բարգավաճում եյին միայն կալվածատերի և կուլակների կապիտալիստական տնտեսությունները։

Ի՞նչպես եր ապրում չքավորությունը մասն զյուղա (նադելները) այնքան չնշին եյին, վոր, ինչպես ասում եյին այն ժամանակ, զյուղացին չփառեր թէ «ուր արածացնի իր հավը»։ Զքավոր զյուղացիությունը լծկան չուներ. գութան չուներ, պաշարն ել մինչև գարուն հերիք չեր անում, հաւական չեր, ցարական հարկերը անինա խեղգում եյին։ Զքարերի ցմահ ձորաեր եր գառնում, իսկ մյուս մասը թողնում համար, իսկ ինչ եր կատարվում միջակ զյուղացիության համար, ներառ նրանց զբությունն ավելի լավ չեր։ Բավկան ե, թյուն պատահեր, — միջակ տնտեսությունները քայլացիության վոր մի անրերի տարի հասներ կամ մի ուրիշ դժբախտությին և վոչչանում։ Միջակ զյուղացիների մեծ մասը չքավորյեթե հաջողում եր ամեն տեսակ միջոցներով գլուխ հանել և զարգանալ կուլակների շարքն եր անցնում և իր հարկանի դժբախտության վրա իր բարեկեցությունն եր շինում։ Գյուղացիության տնտեսությունների բարգավաճումը կապիտալատ որոք անհնարին եւ կարող են գլուխ հանել լոկ հատակ տնտեսություններ, ուրիշի աշխատանքի շահագործման

պայմաններում յերկրի սոցիալիստական բարեփոխման անլսելի դժվարությունները անխուսափելի կերպով առաջ են բերում ազգաբնակչության մանր-ըուրիժուական խավերում թուլամորթության և տատանումների արտահայտություններ։ Այդ տատանումները ազգեցություն են գործում բանվոր գասակարգի վորոշ շերտերի վրա, և յերբեմն ել համկե (ը) առանձին շարքերի վրա։ Կուսակցության տատանվող անդամների մեջ մկանվում ե ծագել դժգոհություն՝ շնորհիվ սոցիալիստական ինդուստրիալզացիայի արագ տեմպերի, հոգնածություն, յերկյուղ և չկամություն՝ կուլակի և նեամանի վրա սոցիալիստական գրոհը առաջ տանելու։ Այդ, ոպպորտունիստական տարրերի շեղումը լենինյան սոցիալիստական շինարարության ուղեգծից, թուլացնում և պրոլետարիատի դասակարգային դիրքերը կուսակցության միջի աջ ոպպորտունիստուկլոնիստաների տատանումները ներկապայմաններում ամենախոշոր վատանգ են ներկայացնում կուսակցության ընդունած՝ սոցիալիզմի շինարարության հինգամյա պլանի խափանման։ Ամենաանխնա պայքար, ամենաանխնա դիմադրություն պետք ե ցույց տալ բոլոր ուկոնին խանգարում են կուսակցության ընկինյան զիսավոր ուղեգծի իրականացմանը։ Մանավանդ մեր պայմաններում ամենից առաջ մեծ դիմադրություն պետք ե ցույց տալ կուսակցության աջ, ակնհայտ ոպպորտունիստական տարրերին և այն բոլորին, ովքեր հաշտպողական վերաբերմունք ունին գետի նրանց։ Առանց այդ վճռական պայքարի ընդդեմ բոլոր թեքումների, հինգամյա պլանի առաջադրած սոցիալիստական շինգիրների լուծումն ապահովված չի լինի։ XV I կուսկոնֆերենցիան միաժամանակ, ցույց տվեց, վոր հինգամյա պլանի իրագործումը «հնարավոր ե աշխատավոր լայն մասսաների և մանավանդ

բանվոր դասակարգի ակտիվության ու կազմակելպվածության հզորագույն աճման հիման վրա միայն»։ Բանվոր դասակարգի միլիոնավոր մասսաներին ամեն կերպ մասնակից անելով սոցիալիստական շինարարությանը և տնտեսությունը ղեկավարելու գործին, ամեն կերպ ծավալելով սոցիալիստական մրցումը, միլիոնավոր մասսաների ինքնաքնադատությունը ընդգեմ պետապարատի բյուրակրատիկական խեղաթուրումների — միայն այդ գեղքում հնարավոր կլինի հինգամյա պլանի իրագործումը, ինչպես մեզ ցոյց ետալիս XVI կուսկոնֆերենցիայի բանաձեւ:

տուրական, արտադրական և այլն ոգնությունն ցույց տալով, — ավելի ու ավելի յե ամբազնդելու իր ղեկավարող դերը։

Ամբազնդվելու յեն պրոլետարական դիկտատուրայի եկոնոմիական և քաղաքական դիրքերը՝ զասակարգային թշնամիների հետ մղվող պայքարում — թե յերկրի ներսի և թե համաշխարհային բուրժուազիայի նկատմամբ։

Զգալի կերպով բարձրանալու յե ազգային հանրապետությունների, յետամասց ույոնների և շրջանների տնտեսական և կուլտուրական մակարդակը, վորոնց ամենաանխիղջ կերպով խեղզում եյին ցարիզմի ժամանակ։

Ամբազնդվելու յե յերկրի ինքնապաշտպանության ընդունակությունը և ուժը։

Կատարված կլինի մեծագույն առաջադիմություն՝ կենինի և կուսակցության հետեւալ լոգունդի իրականացման գործում — «հասնել և գերազանցել առաջադիմ կապիտալիստական յերկրները տեխնիքական և եկոնոմիքական տեսակետից»։

Հինգամյա պլանի իրազորման հանապահին մեծագույն դժվարություններ են կանգնած

Ժողովրդական տնտեսության զարգացման հինգամյա պլանը — ինչպես գորոշել ե XVI կուսկոնֆերենցիայի բանաձեւ — «սոցիալիստական լայնածավալ գրոհի ծրագիրն ե»։ Նրա իրականացման ուղիի վրա հսկայական դժվարություններ են կանգնած։ Մեր յերկրի տեխնիքական և եկոնոմիական յետամացությունը բազմամիլիոն ցաքուցրիվ գյուղացիական տնտեսությունները կոլեկտիվ աշխատանքի հիման վրա վերակառուցելու չափազանց բարդ գործը, աշխարհում միակ սոցիալիստական յերկրի դրությունը, վոր շրջապատմիակ սոցիալիստական յերկրի դրությունը, վոր շրջապատ-

ված և ամեն կողմից կատաղած իմպերիալիստական գիշաւ-  
տիչների խիտ շարքով, — այդ ամենը մեր առաջ հինգամ-  
յակի պլանի իրագործման համար մեծագույն դժվարություն-  
ներ են կանգնեցնում: Կապիտալիստական տարրերի դիմա-  
դրությունը, վորոնք կատաղի կերպով պաշտպանվում են  
սոցիալիստական պրոլետարիատի աճող գրոհից, առաջ ե բեռ-  
ում դասակարգային կովի չտեսնված սրումն: Դա իր հեր-  
թին ավելի ևս մեծացնում ե հինգամյա պլանի իրագործման  
դժվարությունները:

Հինգամյա պլանը կարելի յե իրագործել միմիայն վորոշ  
պայմաններում:

Այդ պայմանները թված են XVI կուսկոնֆերենցիայի  
